

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ#



ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY
DEPARTMENT OF INTERNATIONAL RELATIONS#

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
2016-17 ՈՒՍ. ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2017

Պայմանագրեր և համաձայնագրեր

2016-17 ուս. տարում շարունակվել են ՀԱԱՀ-ի միջազգայնացմանն ու արտաքին կապերի ընդլայնմանն ուղղված աշխատանքները:

Ներկայումս Համալսարանն ունի շուրջ 86 կնքված պայմանագրեր եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ: Այդ շրջանակներում Համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի և կազմակերպությունների հետ:

2016-17 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 20 հուշագրեր և պայմանագրեր.

- Փենսիլվանիայի նահանգային համալսարան, «Americas» միջազգային բիզնես դպրոց (Բրազիլիա),
- Բանատի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան (Ռումինիա),
- Օդեսայի սննդամթերքի տեխնոլոգիաների ակադեմիա (Ուկրաինա),
- Կալիֆորնիայի պետական համալսարան, Ֆրեզնո (ԱՄՆ)
- Միչուրինսկի պետական ագրարային համալսարան (ՌԴ)
- Շչեճինի համալսարան (Լեհաստան)
- "Գործնական ուսուցում-միջազգային երկխոսություն-կայուն հաջողություն" PRAXX կազմակերպություն (Գերմանիա)
- Կաստելո Բրանկոյի պոլիտեխնիկական ինստիտուտ
- Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD)
- Կոսիցեում անասնաբուժական բժշկագիտության և դեղագործության համալսարան (Սլովակիա)
- Հանրապետական գիտաունիտար ձեռնարկություն "Համակարգային հետազոտությունների ինստիտուտ Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի ագրոարդյունաբերական համալիրում"
- Սալերնոյի համալսարան (Իտալիա)
- Վառնայի տեխնիկական համալսարան (Բուլղարիա)
- Կատովիցեում Սիլեսիայի համալսարան (Լեհաստան)
- ՌԴ կենտրոնական միության Բարձրագույն կրթության մասնավոր կրթական հաստատություն "Սպառողական կոպերատիվների սիբիրյան համալսարան" (Նովոսիբիրսկ, ՌԴ)
- Ռուսեի Անջել Կնչևի անվան համալսարան (Բուլղարիա)
- Նորվեգիայի արկտիկական համալսարան (Թրոմսյոյի համալսարան) (Եվրասիա ծրագիր 2016)
- Սասարիի համալսարան
- Տեխասի գյուղատնտեսության և մեխանիզացման համալսարանի Գյուղատնտեսական էկոնոմիկայի դեպարտամենտ, Գյուղատնտեսության և բնական գիտությունների քոլեջ (ԱՄՆ)
- Ջորջիայի համալսարանական համակարգի ռեգենտների խորհուրդ, Ջորջիայի համալսարան, (ԱՄՆ)

Նշված հուշագրերից և համաձայնագրերից շուրջ 10-ի շրջանակներում իրականացվել է ակտիվ համագործակցություն:

ՀԱԱՀ-ի համար կարևոր և գործուն կոնսորցիումներ են ԱՊՀ առաջատար ագրարային բուհերի ռեկտորների խորհուրդը, ինչպես նաև Եվրոմիության Տեմպուս և Էրազմուս ցանցային ծրագրերի բուհերը:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի արդյունքներ

ՀԱԱՀ-ն ակտիվորեն մասնակցում է Էրազմուս+ ծրագրին և այդ շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին: 2016-17 թթ. ՀԱԱՀ-ն ունեցել է շուրջ 12 Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր տարբեր համալսարանների հետ, որի շրջանակներում կատարվել են տարբեր ուսուցումներ և վերապատրաստումներ: 2017թ.-ի մարտ ամսին մշտադիտարկման նպատակով ՀԱԱՀ են այցելել Էրազմուս+ Ազգային գրասենյակի աշխատակիցները և հանդիպում ունեցել Արտաքին կապերի դեպարտամենտի աշխատակիցների, Էրազմուս+ ՀԳԻ ծրագրի շրջանակներում արտասահմանում ուսում անցած կամ վերապատրաստված ուսանողների և աշխատակիցների հետ:

- **Վառնայի մենեջմենտի համալսարան (Բուլղարիա)** – բակալավրիատի 2 ուսանողներ 4 ամիս տևողությամբ սովորել են տվյալ համալսարանում:
- **Գյուլատնտեսագիտության և անասնաբուժական բժշկագիտության Բանատի համալսարան (Ռումինիա)** – բակալավրիատի 3 ուսանողներ և 1 հետազոտող 5 ամիս տևողությամբ սովորել են տվյալ համալսարանում: Ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ն հյուրընկալել է 4 աշխատակիցների, միաժամանակ ՀԱԱՀ-ից 2 աշխատակիցներ վերապատրաստվել, իսկ 2-ը՝ դասախոսություններ են կարդացել Բանատի համալսարանում:
- **Ռադբուդի համալսարան (Նիդերլանդներ)** – Արտաքին կապերի 1 աշխատակցի մասնակցել և վերապատրաստվել է այնտեղ կայացած միջազգայնացման շաբաթին, իսկ օգոստոսին ՀԱԱՀ-ի 10 աշխատակցիներ և հետազոտողներ կմասնակցեն այնտեղ կայանալիք ամառային դպրոցին:
- **Կրակովի Յագելլոնիան համալսարան (Լեհաստան)** – տվյալ համալսարանի 1 աշխատակից 2017-ի հուլիսին վերապատրաստվեց ՀԱԱՀ-ում:
- **Արևմտյան Շոտլանդիայի համալսարան (Մեծ Բրիտանիա)** – ծրագրի շրջանակներում դեռ շարժունություն չի կատարվել, սակայն 2 աշխատակիցներ այցելել են ՀԱԱՀ՝ հետագա համագործակցության ուղղությունները քննարկելու համար:
- **Հռոմի Սապիենցա համալսարան (Իտալիա)** – շարժունություն դեռ չի կատարվել:
- **Գայզենհայմի համալսարան** – բակալավրիատի 4 ուսանողներ, 6 մագիստրանտներ և 1 ասպիրանտ 3-ից 10 ամսով սովորել են Գայզենհայմի համալսարանում:
- **Վահենշտեֆան-Թրիսդորֆ համալսարան** – ծրագրի շրջանակներում 2-րդ կուրսի 2 մագիստրանտներ շարունակում են իրենց ուսումը ՎԿԳՀ-ում:
- **Վիձեմի կիրառական գիտությունների համալսարան** – շարժունություն դեռ չի իրականացվել:
- **Ալմերիայի համալսարան (Իսպանիա)** – բակալավրի 1 ուսանող 6 ամսով ուսումը շարունակել է Ալմերիայի համալսարանում
- **Մինիո համալսարան (Պորտուգալիա)** – 1 բակալավր, 2 մագիստրանտ և 1 ասպիրանտ սովորել, և 4 աշխատակից վերապատրաստվել է տվյալ համալսարանում:
- **Էստոնիայի բնագիտական համալսարան (Էստոնիա)** – Արտաքին կապերի դեպարտամենտի 1 աշխատակից վերապատրաստում է անցել նշված համալսարանում:

Գերմանիայում պրակտիկայի ծրագրեր

Համալսարանը ներկայումս պայմանագրեր ունի գերմանական մի քանի կազմակերպությունների հետ, որոնք ապահովում են ՀԱԱՀ ուսանողների պրակտիկան

Գերմանիայում: Դրանք են՝ Logo, JD East, GeTech և նոր կնքված Praxx կազմակերպությունները: Հաշվետու ժամանակաշրջանում 6 ուսանողներ, մագիստրանտներ և ասպիրանտներ իրենց պրակտիկան են անցկացրել/անցկացնում Գերմանիայում, որոնցից մեկականը՝ Logo, GeTech, և DJ East ծրագրերով, 3-ը՝ Praxx-ով:

5 մագիստրանտներ անցնում են պրակտիկա ՎԿԳԿ-ում, իսկ 1-ը՝ ՎԿԳԿ-ում՝ Ակտ ծրագրով:

ՏԵՄՊՈՒՍ ծրագրի արդյունքներ

ՀԱԱԿ-ն ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել և շարունակում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

• **«Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց» (LeAGUe, 2013-2017 թ. հունիս)**

Նախագիծի նպատակն է համալսարանի և պետական մարմինների միջև համագործակցության միջոցով ցկյանս ուսուցման մոտեցումների և մեթոդաբանության մշակումը, համապատասխան կենտրոնների ստեղծումը, նոր հմտությունների# ձեռքբերումը և վերակրթությունը:

Ծրագրի# համակարգողն# է# Շվեդիայի# Լինեուս# համալսարանը:# Ծրագրի# Արևելյան# գործընկերներ# են՝# Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի մի շարք կրթական հաստատություններ, կրթության և գիտության նախարարություններ,# կազմակերպություններ:# Եվրոպական# գործընկերներն# են՝# Դանիայի# տեխնիկական համալսարանը, Կոնիքրայի# համալսարանը# (Պորտուգալիա),# Ռուսերի# Անջելի# Կանչևի# անվան# համալսարանը# (Բուլղարիա): Նախագիծ# շրջանակներում# ստեղծվել# է# շարունակական կրթության# փորձագիտական պորտալ,# ՀԱԱԿ-ում# կահավորվել# է# համապատասխան# լսարան# և# իրականացվել են համապատասխան# պիլոտային# դասընթացները:

2016-17 թթ ընթացքում նախագծի շրջանակներում իրականացվել է# գործուղում (2 աշխատակից):# 2016 թ. հոկտեմբերին ՀԱԱԿ-ն հյուրընկալեց մասնակից համալսարանների ներկայացուցիչներին, որտեղ ներկայացվեցին կատարված աշխատանքները, քննարկվեցին ծրագրի ընթացքն ու հետագա անելիքները:#

Ծրագիրը կավարտվի սույն թվականի սեպտեմբերի 30-ին:

• **«Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակազմի մշակում արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով» (GOVERN, 2014-2017).**

Ծրագրի գլխավոր նպատակն է՝ ՀՀ բուհերում ձևավորել արդյունավետ և գործող կառավարման մոդելներ և մեխանիզմներ, որոնք կնպաստեն բուհերի՝ Բոլոնիայի գործընթացին համահունչ ինքնավարության և պատասխանատվության բարձրացմանը:

ՀԱԱԿ թիմը, բուհի կարողությունների և խնդիրների գնահատման նպատակով եվրոպական գործընկերների կողմից մշակված հարցաշարով իրականացրել է 4 ֆոկուս խումբ՝ կառավարիչների, վարչական անձնակազմի, պրոֆեսորադասախոսականի և ուսանողների: Եվրոպական գործընկերների կողմից իրականացրած վերապատրաստումներին մասնակցել են կառավարիչներ, դեկանները և ամբիոնի վարիչներ, ակադեմիական գործերի և գրանցումների վարողներ: ՀԱԱԿ-ում իրականացվել է վերապատրաստումների շարք՝ բուհի վարչական,

պրոֆեսորադասախոսական և մասնագիտությունների համակարգողների հետ: Դեկանների և ամբիոնի վարիչների համար իրականացված վերապատրաստումների ժամանակ շեշտադրումը եղել է կրթական ծրագրի մշակումը, կառավարման նոր մոտեցումները, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական պլանավորման, ինքնավերլուծության և բարելավման պլանների մշակման և իրականացման սկզբունքների վրա: Ծրագրի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների, փորձի շնորհիվ վերանայվեց կրթական ծրագրերի մշակման ուղեցույցը, որը ներկայումս հիմք է ծառայում ՄԿԾ-ների մշակման և լրամշակման համար: ՀԱԱՀ-ում վերանայվել են տարբեր ոլորտների կառավարման համակարգերը, քննարկվել և իրականացվել են կանոնակարգային, փաստաթղթային ու կառուցվածքային փոփոխություններ: ՀՀ գործընկեր բուհերը հավանության են արժանացրել ՀԱԱՀ-ի ՏՏ և ԻԾ կենտրոնի կողմից մշակված էլեկտրոնային բուհի կառավարման (ռեգիստրար) համակարգը, որը նաև այս ծրագրի շրջանակներում տեղայնացվելու է այլ ՀՀ գործընկեր բուհերում: Ստեղծվել են Բոլոնիայի սկզբունքներին համահունչ կրթական ծրագրի մշակման, ուսանողակենտրոն ուսուցման և ուսումնառության կազմակերպման, ներդրման ու գործարկման ուղեցույցներ: Տեղի է ունեցել 2 վերապատրաստում՝ ստրատեգիական և կառուցվածքային կառավարում և մարդկային ռեսուրսների և ֆինանսների կառավարում: Մշակվել են մի շարք փաստաթղթեր (կրեդիտային համակարգով ուսուցումը կազմակերպելու և ըստ վերջնարդյունքների գնահատման ուղեցույց, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ, ուղեցույց պրոֆեսորադասախոսական կազմի համար, դասընթացի և ուսումնառության նյութերի պատրաստման և իրականացման մեթոդական ուղեցույց, մասնագիտության կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի ընթացակարգ, ՀԱԱՀ կադրային քաղաքականություն, մասնագիտության կրթական ծրագրի արտոնման, փորձաքննության և հաստատման կանոնակարգ, համալսարանի ակադեմիական աշխատակազմի ներգրավման և կայունության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ, պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ կադրերով համալրման քաղաքականություն, մասնագիտության կրթական ծրագրի պարբերաբար վերանայման ընթացակարգ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի աշխատակիցների պաշտոնների նկարագիր, պրոֆեսորադասախոսական և ուսումնառության կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականություն և ընթացակարգեր, ուղեցույց առաջին կուրսի ուսանողների համար, ռազմավարական պլանի կատարողականի ցուցիչները, մասնագիտության կրթական ծրագրի (Մոդուլ) և Առարկայական ծրագրի հիմնական սկզբունքները, ուսանողակենտրոն ուսուցում, մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքը և վերջնարդյունքները): 2017 թ. մարտին ASIN գերմանական հավատարմագրման և ՈԱԱԿ-ի կողմից կատարվել է ծրագրի արտաքին գնահատում, որի արդյունքները դեռ հայտնի չեն: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել մի շարք նյութատեխնիկական միջոցներ:

• «Հայաստանում ազգային և սեկտորալ որակավորման շրջանակների ամրապնդում» (ARMENQA, 2013-2017).

Ծրագրի համակարգողն է Լինկոպինգ համալսարան (Շվեդիա): Նպատակը՝ Հայաստանում բուհի շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացումն ու աշխատաշուկայում ազգային և միջազգային մակարդակներով Հայաստանում ստացած որակավորումների ճանաչումն է, մեթոդական, իրավական փաստաթղթերի ստեղծման և կիրառման միջոցով Հայաստանի որակավորման ազգային շրջանակի գնահատումը: Ծրագրի շրջանակներում վերջնական մշակում են ստացել ՀՀ ԲԿ Որակավորումների ազգային շրջանակը, որակավորումների ոլորտային (գյուղատնտեսություն) շրջանակը,

մշակվել են ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա մասնագիտության բակալավրի և մագիստրոսի որակավորումների բնութագրիչները՝ հայերեն և անգլերեն լեզուներով: 2016-17 ուս. տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ի թվով 4 մասնակիցներ գործուղվել են Բելգիա և Դանիա, որտեղ մասնակցել են ՈԱՇ-ի բնութագրիչների, վերջնաարդյունքների հիման վրա կրթական ծրագրերի կազմելուն, ուսանողակենտրոն ուսուցման և գնահատման կազմակերպելուն: 2017 թ. մայիսին համալսարանի ներկայացուցիչները մասնակցեցին ԵՊՀ-ում կայացած վերջնական հանդիպմանը, որտեղ ներկայացվեց ՀԱԱՀ-ում մշակված առարկաների մասնագրերը՝ բակալավրային և մագիստրոսական կրթությունների համար:

ԷՐԱՋՄՈՒՍ ՄՈՒՆԴՈՒՍ և այլ ծրագրեր

Էրազմուս Մունդուսը բարձրագույն կրթության բնագավառում իրականացվող համագործակցության և շարժունության ընդլայնմանն ուղղված ծրագիր է, որը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից: Ծրագրի նպատակն է՝ բարելավել եվրոպական բարձրագույն կրթության որակը և համագործակցության միջոցով խթանել երկխոսությունն ու փոխըմբռնումը մարդկանց և մշակույթների միջև: Նախագծերի շրջանակներում Հայաստանի բուհերի ուսանողները, ակադեմիական, վարչական անձնակազմի ներկայացուցիչները, ինչպես նաև հետազոտողները հնարավորություն են ունեցել ստանալ կրթաթոշակ և ուսանել (վերապատրաստվել) եվրոպական մի շարք երկրների համալսարաններում:

Ներկայումս ՀԱԱՀ-ում գործում են Էրասմուս-Մունդուս հետևյալ 2 ծրագրերը՝

• ERASMUS MUNDUS Գործողություն 2 EMBER «Կրթական հնարավորությունների ընդլայնում»

2013 թվականից սկսած ՀԱԱՀ-ն համագործակցում է EMBER նախագծի շրջանակներում: Կրթական նախագիծը համակարգվում է Իսպանիայի Սևիլիայի համալսարանի կողմից, իսկ համահամակարգողն է՝ Թբիլիսիի Իվան Զավախիշվիլիի անվան պետական համալսարան (Վրաստան): EMBER նախագծի շրջանակներում համագործակցում են 20 բուհեր:

Նախագծի նպատակն է նպաստել բուհերի միջև համագործակցությանը՝ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ուսանողներին, ինչպես նաև վարչական աշխատակազմին նոր կրթական հնարավորություններ տալով, հատկապես խթանելով շարժունությունը ոչ ԵՄ անդամ երկրներից դեպի ԵՄ անդամ երկրներ:

2016-17 թթ EMBER նախագծի շրջանակներում 1 ուսանող 10 ամսով ամսով ուսանում է Վիլնյուսի համալսարանում, 1 հետազոտող հետազոտություններ է անցկացնում Լոնդոնի համալսարանում, իսկ վարչական 2 ներկայացուցիչներ յուրաքանչյուրը 3-ական ամսով միջազգայնացմանն ուղղությամբ վերապատրաստվել են Սալեռնոյի համալսարանում (Իտալիա):

• ERASMUS MUNDUS Գործողություն 2 EFFORT «Կրթական ուժ՝ միտված ԵՄ-Արևելյան եվրոպական համագործակցության համար շարժունության խթանմանը»

Նախագիծը համակարգվում է Սալոնիկի Ալեքսանդրի անվան տեխնոլոգիական կրթական ինստիտուտի կողմից (Հունաստան): 2013 թվականից սկսած ՀԱԱՀ-ն EFFORT նախագծի համահամակարգողն է: Կոնսորցիումում համագործակցող բուհերի թիվը 20 է: EFFORT նախագծի հիմնական նպատակն է խթանել համակարգված ակադեմիական համագործակցությունը եվրոպական և արևելյան երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև, ընդլայնել գիտական հորիզոնները կոնսորցիումի անդամ հաստատությունների միջև լավագույն փորձի փոխանակման միջոցով, հավասար հնարավորություններ տրամադրել հաշվանդամ ուսանողներին և այլն:

2016-17 թթ EFFORT նախագծի շրջանակներում 1 բակալավրի ուսանող ուսուցանվում է Վիանա դու Կաշտելոյի պոստիտեխնիկական ինստիտուտում, 2 ասպիրանտներ՝ Սալոնիկի Ալեքսանդրի անվան ինստիտուտում, 4 վարչական աշխատողներ վերապատրաստվել են վերոհիշյալ հաստատություններում: Այս ծրագրի շրջանակներում 2 աշխատակիցներ էստոնիայից վերապատրաստվել են ՀԱԱՀ-ում:

• 2017 թ. **Եվրասիա կրթական ծրագրի** (CPEA-LT-2016/10092) ֆինանսավորմամբ իրականացվում է Նորվեգիայի Թրոմսոյի Արտիկական համալսարանի, Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի ինստիտուտի և ՀԱԱՀ-ի համատեղ ծրագիր: Ըստ այդ ծրագրի ս/թ սեպտեմբերի 18-21-ը նախատեսվում է Թրոմսոյի Արկտիկական համալսարանի ռեկտորի և մի քանի այլ հյուրերի այցը ՀԱԱՀ: Նախատեսվում է ՀԱԱՀ Բոյսերի սելեկցիա և գենետիկա 4-րդ կուրսի բազայի վրա 2017-18 ուս. տարվանից սկսել «Բոյսերի կենսատեխնոլոգիա» դասընթացի դասավանդումը: Ըստ ծրագրի ՀԱԱՀ մի քանի մագիստրոսներ և ասպիրանտներ իրենց գիտահետազոտական աշխատանքները կանեն ու պրակտիկական կանցկացնեն Նորվեգիայում: Ծրագրի շրջանակներում Ա. Մելիքյանն ու Մ Բադալյանը գործուղվել են Նորվեգիա՝ ծրագրի հետ կապված քննարկումների նպատակով:

ՀԱԱՀ-ում և ՀՀ-ում կազմակերպված սեմինարներ, միջոցառումներ և հանդիպումներ

#

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ի աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում կազմակերպված տարաբնույթ հանդիպումների և միջոցառումների: Միաժամանակ, ՀԱԱՀ-ն հյուրընկալել է հյուրերի տարբեր երկրներից, որոնց հիմնական նպատակը երկկողմանի կապերի ստեղծումն էր կամ առկա կապերի ընդլայնումը: Ստորև ներկայացվում են կարևորագույն այցերն ու հանդիպումները:

1. Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում գործող CEIEC ընկերության Ասիայի և Միջին Արևելքի բիզնես դեպարտամենտի ղեկավարներ Ջինգզին Վանգի և Ժոու Լիի այցը ՀԱԱՀ (2016 թ.-ի հուլիսի 22):
2. Արգենտինայի Հանրապետության դեսպանության Տնտեսական-Կոմերցիոն բաժնի ղեկավար Գուստավո Դեմիան Մերլոյի այցը ՀԱԱՀ (2016 թ.-ի օգոստոսի 24):
3. Նոր Անգլիայի համալսարանի Բիզնես դպրոցի (Ավստրալիա) ղեկավարի տեղակալ Գաբրիել Դոնլիվի ու DEVOTRA ընկերության (Նիդերլանդներ) ծրագրային աջակցության մասնագետ Դավիթ Հովհաննիսյանի այցը ՀԱԱՀ (2016 թ.-ի օգոստոսի 25):
4. Աշխատաժողով «Կոնգրես» հյուրանոցում, Ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակը Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանության հետ միասին ԱՄՆ պետքարտուղարության կողմից ստեղծված «Ուսանիր արտերկրում» գրասենյակի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում (2016 թ.-ի սեպտեմբերի 13 և 14):
5. ՏԵՄՊՈՒՍ-ի ՄԱՀԱԹՄԱ դրամաշնորհային ծրագրի արդյունքներն ամփոփող համաժողով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (2016 թ.-ի սեպտեմբերի 30):

6. Սեմինար ՀԱԱՀ-ում՝ «Ուղղորդ քայլերդ դեպի ԱՄՆ բարձրագույն կրթություն» թեմայով՝ կազմակերպված Ամերիկյան խորհուրդների և EducationUSA Հայաստանի կողմից (2016 թ.-ի հոկտեմբերի 5):
7. ՀԱԱՀ-ում Tempus LeAGUe («Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց») ծրագրի հերթական երկօրյա հանդիպում (2016 թ.-ի հոկտեմբերի 11-12):
8. Էստոնական բնական գիտությունների համալսարանի (Էստոնիա) Միջազգային կապերի բաժնի ղեկավար Էդա Տուրսկի այցը ՀԱԱՀ Էրազմուս Մունդուս ծրագրի «EFFORT» կրթաթոշակային նախագծի շրջանակներում (2016 թ.-ի հոկտեմբերի 10-14):
9. Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Գյուղատնտեսության, անասնաբուծության և մատակարարման նախարարության գործադիր քարտուղար, նախարարի տեղակալ Էումար Նովացկիի գլխավորած պատվիրակության այցը ՀԱԱՀ (2016 թ.-ի հոկտեմբերի 13):
10. Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիայի գլխավորած պատվիրակության այցը ՀԱԱՀ (2016 թ.-ի հոկտեմբերի 18):
11. Էրազմուս+ ՀԳ 1 «Միջազգային կրեդիտային շարժունություն» ծրագրի շրջանակներում դասախոսություններ ՀԱԱՀ-ում Ռումինիայի Բանատի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարանի դասախոսների կողմից. «Գինու արտադրության ժամանակակից միտումները. կողմնակի արտադրանքները որպես սննդային հավելումներ»՝ վարող՝ Մարիանա Պոիանա, «Բանատի շրջանի ավանդական մթերքները»՝ վարող՝ Բոգդան Ռադոին, «Սննդի անվտանգության ժամանակակից մարտահրավերները»՝ վարող՝ Դիանա Դոգարու (2016 թ.-ի նոյեմբերի 14-ից 18):
12. ՀԱԱՀ-ում ՏԵՄՊՈՒՍ «ԱՐՄԵՆ-ՔԱ» ծրագրի համաժողով «Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում» թեմայով (2016 թ.-ի նոյեմբերի 24 և 25):
13. Սեմինար-հանդիպում ՀԱԱՀ-ում Հայաստանում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիայի և Գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի (INTA) փորձագետների հետ (2016 թ.-ի դեկտեմբերի 1):
14. Էրազմուս+ ՀԳ 1 «Միջազգային կրեդիտային շարժունություն» ծրագրի շրջանակներում Ռումինիայի Բանատի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարանի Անասնաբուծության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դասախոս Մոնիկա Դրագոմիրեսկուի այցը ՀԱԱՀ (2016 թ.-ի դեկտեմբերի 12-ից 16-ը):
15. Էստոնական բնական գիտությունների համալսարանի (Էստոնիա) դասախոս Դեվիդ Արնիի այցը ՀԱԱՀ Էրազմուս Մունդուս ծրագրի «EFFORT» կրթաթոշակային նախագծի շրջանակներում (2016 թ.-ի դեկտեմբերի 16-ից 20-ը):
16. Միջուրինսկի պետական ագրարային համալսարանի դասախոսներ Բելլա Քարանյանի, Ալեքսանդր Ստարցկի, Մարինա Մատովնիկովայի, Ելենա Ֆեդուլովայի և Սվետլանա Ակմակայի վերապատրաստում ՀԱԱՀ-ում (2016 թ.-ի դեկտեմբերի 21-ից 26-ը):

- 17.«Համալսարանի միջազգայնացում. ռազմավարական տեսլական և որակի ապահովում» խորագրով Տեմպուս PICASA դրամաշնորհային ծրագրի միջազգային գիտաժողով Երևանի պետական համալսարանում (2017 թ.-ի ապրիլի 19-20-ը):
18. Էրազմուս+ ՀԳ 1 «Միջազգային կրեդիտային շարժունություն» ծրագրի շրջանակներում Շոտլանդիայի արևմտյան համալսարանի Գիտության և սպորտի դպրոցի տնօրեն Քիմ Ուայթի և միջազգային կապերի պատասխանատու Ռիչարդ Թեքերի այցը ՀԱԱՀ (2017 թ.-ի ապրիլի 25-28-ը):
19. Սանկտ Պետերբուրգի պետական ագրարային համալսարանի Միջազգային գործունեության և միջազգային նախագծերի կենտրոնի տնօրեն Դմիտրի Կրավցովի այցը ՀԱԱՀ (2017 թ.-ի մայիսի 3-4):
20. Անջել Կնչևի անվան Ռուսեի համալսարանի (Բուլղարիա) ընդհանուր խորհրդի նախագահ, Ռուսեի քաղաքային խորհրդի նախագահ Խրիստո Բելուկինի և Նորարարական կրթական տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Անգել Սմրիկառովիների այցը ՀԱԱՀ (2017 թ.-ի մայիսի 10):
- 21.Աշխատանքային հանդիպում ՀՊՏՀ-ում Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի նախաձեռնությամբ (2017 թ.-ի հունիսի 2): Հանդիպման ընթացքում վերհանվեցին միջազգայնացման գործընթացին վերաբերող հիմնահարցեր, որոնք առնչվում են հայաստանյան գրեթե բոլոր բուհերին, մասնավորապես՝ կրեդիտների փոխճանաչում, վիզաների ձևակերպում, գործընկեր համալսարանների որոնում և այլն: Հանդիպման ավարտին ներկայացվեց Ավստրիայի, Հունգարիայի և Սլովակիայի համալսարանների հետ հնարավոր համագործակցության մեխանիզմը:
22. «Ինչպես գրել արդյունավետ ծրագրի առաջարկ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում» խորագրով աշխատաժողով ԵՊԼՀ-ում՝ Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի նախաձեռնությամբ: Աշխատաժողովի նպատակն էր թիմային աշխատանքների և քննարկումների միջոցով ներկայացնել կոնսորցիումների ստեղծման թիրախային գործընկերների որոնման սկզբունքներն ու առանձնահատկությունները, ծրագրի առաջարկ գրելու հիմնական մոտեցումները, կարևորագույն բաղադրիչները, բյուջեի ճիշտ բաշխումը, հայտի վերջնական ստուգման և բարելավման մոտեցումները, գնահատումը և այլ հարակից թեմաներ: #
23. Աշխատանքային հանդիպում (06.07.2017) Եվրասիա միջազգային համալսարանում՝ կազմակերպված Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի նախաձեռնությամբ: Հանդիպման ընթացքում Գ. Համբարձումյանը ներկայացրեց ՀԱԱՀ-ում Էրազմուս+-ի տվյալներն ու արդյունքները, ծրագրի նրբերման թույլ և ուժեղ կողմերը, հիմնական խնդիրներ, ինչպես նաև դեպարտամենտի գործունեության և աշխատանքի առանձնահատկությունները:

Սեմինարներ և դասընթացներ արտերկրում

2016-2017 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ի աշխատակիցները մասնակցել են արտերկրում կազմակերպված տարաբնույթ միջոցառումների.

1. Հունիսի 27 – հուլիսի 3, 2016 ՀԱԱՀ ուսանողներից երկուսը մեկնել են Վրաստան՝ մասնակցելու «Սեզոնային անտառային դպրոց 2016» վերապատրաստման ծրագրին:
2. Սեպտեմբերի 12-15, 2016 Ռուսաստան է մեկնել 2 թեմայի կատարող և մեկ դասախոս՝ Դոնի Ռոստովի VI միջազգային գիտաժողովին մասնակցելու նպատակով:
3. Սեպտեմբերի 5-9, 2016 Ավստրիա է մեկնել 2 դասախոս՝ Գիտաժողովին մասնակցելու որպես «Էրոզիայի վերահսկողության բիոինժեներական միջոցառումների, կայուն անտառների և արոտների կառավարման միջոցով» փորձագետ
4. Սեպտեմբերի 7-30, 2016 Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն է մեկնել 2 աշխատակից՝ «Ժամանակակից գյուղատնտեսության կառավարման վերաբերյալ Մետաքսի ճանապարհի երկրների համար» սեմինարին մասնակցելու նպատակով
5. Սեպտեմբերի 12-16, 2016 Մեկ աշխատակից մեկնել է Բուլղարիա՝ Վառնայի տնտեսագիտական համալսարանում կայանալիք «Ապրանքագիտությունը կփոխի աշխարհը» 20-րդ գիտաժողովին զեկույցով հանդես գալու նպատակով
6. Սեպտեմբերի 12-16, 2016 Լյուքսեմբուրգ է մեկնել մեկ աշխատակից՝ SMARTER համաժողովին և NEOBIOTA 2016 գիտաժողովին մասնակցելու նպատակով
7. Սեպտեմբերի 13-16, 2016 Մեկ դասախոս մեկնել է Հոլանդիա՝ «Բարենբուրգ» սերմնարտադրող կազմակերպությունում փորձի փոխանակման ծրագրով տեղական սերմնարտադրության կազմակերպմանը ծանոթանալու նպատակով
8. Սեպտեմբերի 27 – հոկտեմբերի 1, 2016 ՀԱԱՀ 2 աշխատակից մեկնել է Դանիա՝ Օրիոս համալսարանում TEMPUS ARMENQA «Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորման շրջանակների ամրապնդում» ծրագրի շրջանակներում հերթական աշխատանքային հանդիպմանը մասնակցելու նպատակով
9. Մարտի 14-15, 2017թ.-ին Մասնավոր անասնաբուծության ամբիոնի վարիչը մեկնել է Վրաստան՝ Թիֆլիս քաղաքում Արևելաեվրոպական կաթնային կոնգրեսի շրջանակներում տեղի ունենալիք կովկասյան կաթնային կոնգրեսին մասնակցելու նպատակով:
10. Մարտի 20-24, 2017թ.-ին «Գինեգործական կրթության գիտարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագրի շրջանակներում Գայգենհայմի համալսարանում կազմակերպված հանդիպումների են մասնակցել ՀԱԱՀ 2 աշխատակից՝ ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտորը և նույն կենտրոնի մասնագետ-մեթոդիստը (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն):
11. Ապրիլի 18-22, 2017թ. Tempus ARMENQA ծրագրի շրջանակներում կայանալիք «Կրթական վերջնարդյունքներ և կրթական ծրագրեր. գնահատում և վերլուծություն» թեմայով հերթական հանդիպում-վերապատրաստմանը մասնակցելու նպատակով Բելգիա է մեկնել 3 աշխատակից:
12. Ապրիլի 26-29, 2017թ.-ին Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական պլատֆորմայի համակարգող խորհրդի նիստին մասնակցելու նպատակով Ռուսաստան է մեկնել ՀԱԱՀ 3 դեկան՝ Տնտեսագիտական, Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական և Ազրոնոմիական ֆակուլտետներից:
13. Հունիսի 12-16, 2017 ՀԱԱՀ 2 աշխատակից մեկնել է Նորվեգիա՝ Թրոմսոյի Արկտիկական համալսարանի, Նորվեգիայի կենսաէկոնոմիկայի ինստիտուտի և ՀԱԱՀ-ի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում կազմակերպվող աշխատանքային քննարկումներին մասնակցելու նպատակով

Համագործակցություն ԱՊՀ երկրների շրջանակում

2017 թ. փետրվարի 9-ին պաշտոնական այցով ՀԱԱՀ էր ժամանել Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական հարթակի համակարգող-քարտուղար, ակադեմիկոս, Ի.Գ. Պետրովսկու անվան Բրյանսկի պետական համալսարանի Կենսատեխնոլոգիաների և էկոլոգիայի նորարարական գիտակրթական կենտրոնի տնօրեն Իրինա Նամը: ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպման նպատակն էր բիզնեսի և գիտության փոխգործակցությանը նպաստելը, հայաստանյան ագրարային ոլորտի ներկայացուցիչներին ԵԱՏՄ երկրների փորձին ու կիրառվող տեխնոլոգիաներին ծանոթացնելը:

2017թ. մարտի 23-ին Կրասնոդարում կայացավ Կուբանի պետական ագրարային համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Բելառուսի պետական համալսարանի և "Կրթություն, գիտություն, նորարարություն" ֆոնդի կողմից համատեղ կազմակերպվող "Տնտեսական աճի գործոնները: Համաշխարհային միտումները և ռուսական իրականությունը" երիտասարդ գիտնականների գիտագործնական գիտաժողովը, որտեղ ՀԱԱՀ-ն ներկայացնում էր տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրանտ Զարմիկ Մելիքյանը:

2017թ. ապրիլի 23-ին ՀԱԱՀ պատվիրակությունը (տնտեսագիտական ֆակուլտետի դեկան պրոֆ. Է. Ղազարյան, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Վարդանյան, Ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Գ. Սանթրոսյան) մասնացել են Մոսկվայում կայացած Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական հարթակի համակարգող խորհրդի խորհրդակցությանը, որտեղ Է. Ղազարյանը Հայաստանի օրինակով ներկայացրել է ԵԱՏՄ անդամ-երկրներում գյուղական տարածքների զարգացման միտումներն ու հեռանկարները:

2017 թ. մայիսի 2-5-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կայացավ «Ազգային տնտեսությունները գլոբալացման եւ տեղային վերափոխումների պայմաններում» միջազգային գիտագործնական երրորդ համաժողովը, որի կազմակերպիչներն էին ՌԴ կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանը, ՌԳԱ կենտրոնական տնտեսագիտամաթեմատիկական ինստիտուտը, ՀԱԱՀ-ն, Թելավիի պետական եւ Վրաստանի ազգային համալսարանները:

2016-2017 ուսումնական տարում պաշտոնական այցերով ՀԱԱՀ են ժամանել Միչուրինսկի պետական ագրարային համալսարանի, Ժողովուրդների բարեկամության ռուսական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի պետական ագրարային համալսարանի ներկայացուցիչները, որոնց արդյունքում կնքվել են համագործակցության հուշագրեր: Համագործակցության նոր հուշագրեր են ստորագրվել նաև Օրենբուրգի պետական ագրարային համալսարանի և Սպառոդական կոոպերատիվների սիբիրյան համալսարանի հետ: 2017 թ. դեկտեմբերին Միչուրինսկի պետական ագրարային համալսարանի 5 աշխատակիցներ որակավորման բարձրացման նպատակով 1 շաբաթ այցելեցին ՀԱԱՀ, որտեղ ծանոթացան ուսումնական գործընթացներին, պրակտիկաների կազմակերպմանը, քոլեջում ուսուցման կազմակերպմանը և այլն:

2016-17 թթ գործուղումների ցանկ (ուսանողներ)

Ծրագիր	քանակ	%
Erasmus+	24	57
Erasmus Mundus Effort	2	4.8
Erasmus Mundus Ember	1	2.4
ՎԿԳՀ	5	11
ՎԿԳՀ Ակտ	1	2.4
Logo	2	4.8
Praxx	3	7
JD East	1	2.4#
GeTech	1	2.4#
Summer school	2	4.8
Ընդամենը	42	100

2016-17 թթ գործուղումների ցանկ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր	քանակ	%
Erasmus+	10 (+10 հոգի՝ օգոստոս ամսին)	66,7
Erasmus Mundus EMBER	2	6.7
Erasmus Mundus EFFORT	1	3.3
Tempus ARMENQA	5	16.7
Tempus LeAGUe	2	6.7
Ընդամենը	30	100

Արտաքին կապերի դեպարտամենտը՝ աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի՝ միջազգայնացմանը վերաբերող բաժինը: Մասնավորապես, մանրամասն տեղեկատվություն է տեղադրվել գործող և նախկին միջազգային ծրագրերի մասին, ավելացվել են արտագնա և ներգնա ուսանողների փաստաթղթավարությանը վերաբերող բաժիններ, կազմվել են և կայքում տեղադրվել շարժունությանը վերաբերող փաստաթղթեր և այլն: 2016-17 ուս. տարում դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել է մոտավորապես 44 հայտարարություն, որից 11-ը՝ մրցույթների վերաբերյալ, 14-ը՝ էրազմուս+ ծրագրի մասնակցիների կողմից:

Դեպարտամենտի աշխատանքի արդյունավետության վերլուծություն

Չնայած արտաքին համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ի որոշակի հաջողություններին և համագործակցության անընդհատ ընդլայնմանը, այստեղ դեռևս առկա են թույլ կողմեր և աշխատանքների կազմակերպման բարելավման հնարավորություններ: Մասնավորապես, առկա են թերացումներ հետևյալ հարցերում.

1. Դեպարտամենտի և համալսարանի այլ ստորաբաժանումների միջև թույլ կապ:
2. Եվրոպական չափանիշներին համապատասխան կացության պայմանների բացակայություն՝ օտարերկրյա դասախոսներին և ուսանողներին օթևանելու համար:

3. Ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզվի իմացության թույլ մակարդակ:
4. Միջազգային ծրագրերին մասնակցելու տեսակետից ուսանողների և դասախոսների թույլ հետաքրքրվածություն և նախաձեռնողականություն:

ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Զարգացնել համագործակցությունն արտասահմանյան համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ամրապնդելով հինը և ստեղծելով նոր կապեր, ընդգրկվել մասնագիտական և գիտակրթական միջազգային ասոցիացիաներում և կազմակերպություններում:
2. Ընդլայնել համալսարանի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին և բարձրացնել շարժունության համալսարանական ցուցանիշը:
3. Բարձրացնել միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը,
4. Շեշտադրել օտար լեզուների տիրապետման կարևորությունն ուսանողների և դասախոսների համար:

S	W
<ul style="list-style-type: none"> • համալսարանի լայն համագործակցություն • համալսարանի ղեկավարության աջակցություն և հետաքրքրվածություն՝ միջազգայնացման գործընթացում • դեպարտամենտի աշխատակիցների ակտիվ գործունեություն 	<ul style="list-style-type: none"> • ուսանողների և աշխատակիցների՝ օտար լեզվի իմացության ցածր մակարդակ • համալսարանի՝ սեփական միջոցների անբավարարություն աշխատակիցների և ուսանողների վերապատրաստումների համար • հյուրերի կացարանի ոչ բավարար վիճակ • աշխատակիցների և ուսանողների թույլ հետաքրքրվածության միջազգային ծրագրերի նկատմամբ • աշխատակիցների շատ թույլ ներգրավվածություն՝ սեփական նախաձեռնությամբ միջազգային ծրագրերի իրականացման տեսակետից
O	T
<ul style="list-style-type: none"> • ագրարային բնույթի միակն բուհը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից 	<ul style="list-style-type: none"> • ուսանողների թվաքանակի պակասում • ֆինանսական օժանդակության նվազում կամ ոչ բավարարա մակարդակ